

Այդ դարուն հաւանարար 20,000-ի կը հասնէր հայութեան թիւը Մոլտովայի մէջ, երբ միայն Սուչովան 4000-ի մօտ հայ բնակիչ կ'ունենայ:

* * *

ԺԶ. դարն ալ մեզ թիւեր չի տար:

Այդ դարու ուումանահայ կեանքին մասին մեր ձեռքը եղած կարեւոր աղբիւրներէն մէկը Մինաս Թոխաթեցիի Ողբն է: Սոյն քերթուածը, որ կը նկարագրէ 1551 թուականին Շթէֆան Ռատէչ Վոյվօտին կողմէ հայոց դէմ յարուած կրօնական հալածանքները, շատ բան չի պարզեր մեզ հայութեան թիւին մասին: Այդ քերթուածէն երեւան կուզայ սակայն թէ հայերը Մինաս Թոխաթեցիի նկարագրած քաղաքներուն մէջ (Սուչովա, Եաչ, Պօթօչան, Վասլիու, Հօթին, Սերէթ եւ Ռօման) քաղաքիւ էին, հարուստ եւ անուանի:

Մինաս Թոխաթեցի իր Ողբին մէջ կ'ըսէ .

... Հիւսիսային կողմն աշխարհի
Փոքրիկ երկիր կայ Օլախի,
Բազում Հայք կայր իւրեանց միջի,
Լաւ քրիստոնեայք եւ անուանի:

Երիցանիքն ուսած էին
Ժամատեղօք պայծառ էին
Խիստ փառաւոր Հայեր կային .
Յանկարծ փորձանք կ'աւ օղբին:

Յետոյ կը պատմէ Շթէֆան Վոյվօտին հրեշտարած հալածանքներն ու տանջանքները յիշեալ եօթը քաղաքներու հայերը յունադաւան դարձնելու համար, եւ կը նկարագրէ թէ այդ հալածանքներուն հետեւանքով ինչպէս շատեր ստիպուեցան իրենց հաւատքը ուրանալ, ու շատեր ալ հեռացան Ռումանիոյ սահմաններէն .

... Վա՛յ եւ եղուկ հազար բերան
Հառաչեցէք անենեքեան
Այս Օլախաց Հայերս որ կան
Ի հաւատոցրն գրկեցան:

Եկեղեցիքն փակեցան
Այս սուրբ տանքերն այրեցան
Ազնի գրեանքն Խուրն այրեցան
Չայն պաշտամանցն վերացան:

... Երկրոց երկիր շատոնք անկան
Քահանայք եւ աշխարհական .
Բազում եղբարք բաժանեցան
Ղարիպուքիւն վտարեցան:

Որք ի կանանց խիստ հեռացան
Ի յայլ քաղաք բնակեցան .
Ո՞վ է տեսլ այսպէս խեղճ բան .
Վա՛յ եւ եղուկ հազար բերան:

Նոյն հալածանքներուն մասին խօսելով ուրիշ հայ քրոնիկագիր մը, Երեմիա Չէլչպի Քէօմիւրճեան, պզտիկ լոյս մը կուտայ, հազար տուն ցոյց տալով միմիայն Սուչովայի հայերուն թիւը:

«Ի թվականութեան հայոց Ռ-ին (1551),
Ի Սէչուվ քաղաք երկիր Ուլախին,
Թաղաւորն Ստեփան՝ դաւանութեամբ
Յունաց,

Բնութեամբ կալաւ հազար տուն ի Հայոց ազգէ,
Որք ընդ նորա իշխանութեամբն էին
Դարձուցանել յաղանդս իւր»:

Այս հալածանքներուն հետեւանքով մեծապէս կը պակսի ուումանահայոց թիւը:

Ամէն պարագայի մէջ, սակայն, 15,000-էն պակաս չէր հայութեան թիւը Մոլտովայի մէջ ԺԶ. դարու վերջերուն, ենթադրելով որ նոյն դարու կէսերուն, հալածանքներէն առաջ, 25,000-ի մօտեցած էր այդ թիւը:

* * *

ԺԷ. դարն ալ ժլատ է թիւերու մասին:

Գիտենք սակայն թէ Մոլտովայի հայութեան թիւը որ մեծապէս նուազած էր 1551-ի հալածանքներուն հետեւանքով, դար մը յետոյ դարձեալ աճած կը դասենք: Շմիտ (Suczawas Hist. Denkwuerdigkeiten S. 143 եւ 192) կ'ըսէ թէ 1648-ին Սուչովան իր 20,000 մոլտաւ բնակչութեան եւ սակաւաթիւ արազդայնացած գերմաններու հետ միասին ունէր 3000 հայ բնակիչ:

Գիտենք որ այս դարուն վերջերը մեծ գաղթ մը տեղի ունեցաւ Մոլտովայէն դէպի Թրանսիլւանիա: Հայր Գովրիկեան («Դրանսիլւանիոյ Հայոց Մետրոպօլիսը, Վիեննա, 1896, էջ 21) 3000 ընտանիք կը հաշուէ Մոլտովայէն Թրանսիլւանիա անցած հայերուն թիւը: